

ՏՆՕՐԷՆ-ԽՄՔԱԳԻՐ

Ե. ՓՈՐՏՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ ԿՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԷ Ե ՈՒՂՁԵՒ ԼԱՐ


Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

ԳԱՀԻՐԷ (Հասպպանիէ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABIBIAN LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՒՆՈՒՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան, ողջ դահլիճ. 60

Վեցամսեայ » 35

ՕՏԱՐ ԵՐԿՈՐՆԵՐ

Տարեկան Ֆրանկ 20

Վեցամսեայ » 12

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿՅՆՆԻԿ Է

ԵՒ ԹՂԹՍԱՐԻ ԾԱԽՔԸ

Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած

գրութիւնք եւ չեն օրուիր:

ԳԱՆՁԱՆԱԿԸ

Շատ տաղտկալի պիտի ըլլայ ընթերթերցողին երկարօրէն բացատրել բարեգործական մշտնջենական ասպարէզը որ մարդկային խղճին ու մտքին վրայ ծանրացած է ու անդարմանելի վէրք մը բացած ա՛յն բարոյասէրներին՝ որք փորձառութեան բովէն անցած, գիտեն չբաւորութեան արգասիքն եղող այն ամեն թշուառութեան հատակտորներ՝ որք կը տոչորեն ու կը հիւժեն մարդկային կեանքը: Ի մասնաւորի այսպիսի տօնական աւուրց մէջ աւելի բուռն կերպով կը գատափետուի ու կը յուզուի լրագրական ասպարէզէն՝ որոյ գլխաւոր առարկան է ու պիտի ըլլայ յաւէտ, քանի որ կը տիրէ մամոնայապաշտութեան ողջին մարդկային տարբեր դասակարգերու միջև:

Ժրաշնորհները ստեղծած է այլևայլ միջոցներ՝ որոյ կէս նպատակն է սատարել աղքատութեան բարձման ու միանգամ ընդմիշտ բառնալ այն մրուրը մարդկային ճակատէն՝ որք երբեմնեւի անլուայ ձեռքերով կը կեղեկն կամ կը նօսրանան:

Բարեգործական զօնախմբիչները և ներկայացման կազմակերպութիւնները, խնայողական սնտուկներու հաստատութիւնները, աղքատախնամ ընկերութեանց կազմակերպութիւնք և այլն: Նպատակս չէր մտնել բարեգործութեան խորքը ու պրպտել էական մտած՝ որ միշտ խաւարած կը մնայ: Բնական է վերոյիշեալ ընկերութեանց համար հաստատուած են գանձանակներ՝ որք մշտնջենական յաշոյութեան կամ շարունակման միջոցներ են: Շատ մարդիկներ անկեղծօրէն ու բարոյական միտումով մը արհեստ ըրած են գանձանակաշրջիկութիւնը, եթէ կարելի է ըսել: Շատ ծանր պաշտօն մը, այնպէս չէ՞: Իրօք շատ ծանր ու տաղտկալի է: Երբեմն կը հանդիպուի գեղադէմ երիտասարդի կամ ծերունիի մը, բաւական ծանր գիրքով բռնած է փայլուն գանձանակ մը՝ կարծեցնելով թէ լի է: Օրն ի բուն շրջիլը կէս դար յառաջ որոշում տուած է արգէն, իսկ ամօթխածութիւնը... որոշման զէնիթը մութերու մէջ ծալուած է ու աննշմարելի կը թուի. պաշտօն մ'է ու պէտք է կատարէ: Առաւօտ է, արեգն սկսած է իւր ճառագայթներով ողողել գանձանակը:

Երբեմն հեւ ի հեւ կը քայլէ, երբեմն կ'ոտտոտէ: Դատարկագործներ կամ խանութպաններ այլ ևս ձանձրացած են դոցա երևումէն. սաստիկ անձրեւ, ձիւն, բուք՝ ոչինչ կ'աղղեն, ինչպէս ոչինչ են՝ փորը կուշտ և գլխութեան առաջ անդգաներու կողմէ նետուած յիշոցներու երկարաձիգ շարքը: — Պր. մեղի ինչո՞ւ եկար, այնչափ հարուստներ ունինք, անոնց գիւմեցէ՛ք, այնպէս չէ՞, ամեն մարդ իր ինչո՞նք ետեւէն է, հագուած, սգուած, մազերնին ու մարմնին հարթուած, փորերնին կուշտ, գրպաննին լեցուն, որո՞ւ հոգ եթէ աղքային վարժարանը քանդուած է, մեր զաւակները այլոց վարժարանը գիւմելու տխուր հարկին մէջ կը գտնուին, ուսուցիչները անվճար մնացեր են, եկեղեցին փլեր կամ կողոպտուեր է, արժանաւոր առաջնորդ չ'ունինք, կրօնափոխութիւնը տարածուեր է մեր մէջ, նօթիներու վաճառները խորհրդարաններու դուռը վար կ'առնեն, գլխութիւն, գլխութիւն րիչ մը ճանքով, Աստուած կա՞յ մի: Թշուառութիւն, կորուստ, հայրենիքի, ազգի, լեզուի ու կրօնի ջնջումը վեցեակ դաշնակցութիւն կազմած մեր տունը քանդելու կ'սպառնան ու տակաւին անխիղճ ջոկեր կուշտ նայուածքով մը գրասենեակներու թիկնաթուներուն վրայ բազմած՝ ամենաբնոր սիկանէթներու ծովով արբելու կը գիտեն անցորդներու զեռումը. ամօթ, ամօթ:

— Հայտե՛, հայտե՛, վազը եկուր, միջրէրին կը փակցնենք հիմակ: Երբեմն ալ էֆէնտին: հոս չէ, մանրուք չկայ, առեւտուր չ'ունինք այսօր, երկայն խորհրդածութիւններ, դուռը կամաց դոցէ, — կրկին եկար, երէկ տուի նէ, այս ստակները ի՞նչ կ'ընեն կոր, ամա՛ն, կարծեցի թէ այդ ընկերութիւնը խափանեցաւ, մէյ մ'ալ մի՛ գար:

Հին պատմութիւն մը և վերջացնեմ: Չմեռ ցուրտ երեկոյ մ'էր, սրճարանի մը անկիւնը կծկտած կը դիտէի խառնիճաղանճ բազմութեան ետուրը, ամեն ոք խաղի մէջ խորասուզեալ՝ ստակները ի զո՞ւր կը վառնուէին: Դրամախաղութիւնը անընդհատ կը շարունակուէր, յաղթուողին բարկացող պոռչուքէն. ոտից տակաւ կամային բազխումովը ապակիներուն վրայի շողերը կաթիլ կաթիլ վար կը սահէին, անմեղ մանուկներու կամ չբաւոր ընտանեաց արտասուաց կաթիլներու նման. այդ պահուն դուռը

բացուեցաւ ու ներս մտաւ գանձանակակիր մը: Երկայն շրջանէ մը ետք մտեցաւ քովս նստած պարոնի մը ու իր մէկ լուման խնդրեց յանուն աղքատաց: Պարոնը ժպտուն դէմքով մը արտասանեց.

— Ի՞նչ տալու է ե՞ժէնսիւն:  
— Ինչ որ կը բարեհաճուիք:  
— Հինգ տասը ոսկի կ'ուզեմ տալ. սակայն անկարող եմ. գլխութիւն ունիմ, սակայն ձեռքս ոչինչ...:

— Վնաս չունի, էֆէնտիմ, հինգ տասը փարա ալ եթէ տաք, կրկին կը բաւէ: Պարոնը գրպանները պրպտելով կ'ըսէ. — Ի՞ժքաղ դաբար մանրուք չ'ունիմ, գաղղիական ոսկի մը կայ կրնա՞ք աւրել:

— Ի բոլոր սրտէ կ'ըսէ մեր հաւաքիչը. հապճեպի կամ շուարուով մը միջոցին գրքպանը գտնուող մէկ Ֆրանսական ոսկին բարերարին կը յանձնէ իբրև քառորդ: Մեր պարոնն ալ առօք փառօք գրպանը կը դնէ և ուրիշ քառորդ մ'ալ կը ձգէ գանձանակը: Գանձանակակիրը գոհ սրտով մը կը մեկնի և ժամանակ անցնելէ յետոյ կը դիտէ որ ոսկին անհետացած է գրպանէն. յիշողութիւն, պրպտում, իրարանցում, հաշիւ, անծանօթին որոնումը, ընկերութեան գանձապահին առջև երկայն խոստովանութիւններ, ամեն ինչ ի զո՞ւր. ոսկին թռա՞ւ:

Բաւական ժամանակ է անցած այդ օրէն, հաւաքիչը երբ որ իր ժամանակաւոր պաշտօնակցին կը հանգալի ահ ու գողով մը կը նայի տուիին: Երանի՛ թէ օր մը մեր կարգ ու սարքերը փոխուէին ահագնապէս, որով գանձանակներն ալ կը ջընջուէին ու յիշեալ բարոյասէրին սրտին յագուրդն ալ կը գոհանար:

Աղէքսանդրիա Գ. Ս.

Տիար Մինաս Չերազի Փարիզի մէջ ֆրանսերէն լեզուաւ հրատարակած լ'Արմենի ամսաթերթը, որ ամսոյս 1ին 12րդ տարին կը թեւակոխէ, մեր մէջէն շատերուն դեռ անծանօթ է: Հայ ֆրանսագէտներն ալ, որ եգիպտոսի մէջ մանաւանդ բազմաթիւ են, սարակոյս չունինք թէ՛ նոյնչափ անտարբեր կը դտնուին հայազգի այդ անխոնջ մշակը արժանապէս քաջալերելու և օգտուելու անոր թերթին պարունակութիւններէն:

Ահաւասիկ լ'Արմենի 12րդ տարւոյ առաջին թուոյն նախաթուածը, որ շահ:

կան և համառօտ անսովորին մը կընէ հայ ժողովրդեան մէկ գարու պատմական անցեւոյն վրայ:

1800-1900

Պատահարներով լի դարձ՝ որ վերջացաւ այսօր, կը շնորհ թէ թախծագին, ազդեցութիւն ունեցաւ հայ ժողովրդեան պատմական կեանքին վրայ:

Անօգուտ չ'պիտի ըլլայ ուրեմն 20րդ դարու արշալոյսին, անցնող դարու հայոց պատմութեանը ամփոփումը ընել արագապէս:

19րդ դարը հայոց համար բարենշան երեւոյթներով չ'սկսաւ. Հայաստան՝ որ երկար ատենէ ի վեր կորսնցուցած էր իւր քաղաքական անկախութիւնը, այլեւս կրօնական ինքնավարութիւն մը եւեթ ունէր. հայ ժողովուրդը եւ նոյն իսկ իւր եկեղեցւոյն պետերը, անզթօրէն կը հալածուէին բռնակալ եւ խարրարոս մահմետականներէն:

1800ին, ինչպէս 1900ին՝ հայ ժողովրդեան մէկ մասը չէր ուզեր որ պատարագի ատեն յիշատակուի այն ատենուան Կ. Պօլսոյ պատրիարք Դաւիթ Լօսէցիի անունը. ցուցարարները կայիններով եւ բիրտով գնդաւորութեան Գուգարու Մարտիկեղեցւոյ մէջ, բայց եհնիչերէնրու աղան շատ թուով զօրքերու գուգար անցած, գնդակներով ծակծկեց հայերը եւ բանտարկեց անոնց պետերը ու վանահայր Գալուստն ալ փականքներու մէջ շղթայեց:

1801ին, Երեւանի խանը զօրագունդեր կը զրկէ Էջմիածին, որ այն ատենը Պարսից ձեռքը կը գտնուէր, պաշտպանելու համար Դաւիթ Լօսէցիի կաթողիկոսական թեմակառնութիւնը Պարսիկ զօրքերը մահ կը սպառնային այն հայերուն, որոնք կը համարակէին մերժել այս թեմակառնութիւնը. բռնի կերպով սրբավայրին մէջ հաւաքեցին կայսկապետները եւ իրենց սուրը ու գաւազանը շողացնելով անոնց գլխուն վրայ, Կ. Պօլսոյ նախկին պատրիարքը կաթողիկոս օծել սուին:

Գալուղ կիլիկիոյ Թորոս Կաթողիկոսին, Սիսի շրջակաները կամուրջի մը վրայ, Սօղան-օղու յրդանաւոր թուրքին կողմանէ նոյն սարին անգթօրէն յօշոտուեցաւ:

1807ին, Անգղիան իւր նաւատորմով Կ. Պօլսու կը զրկէ, օտրպելու համար Սուլթանը, Նարօլէոն Ա.ի հետ ունեցած զանազարութիւնը խզելու. Սէլիմ Գ. մայրաքաղաքին բնակչաց հայրենասիրութեանը կոչում կ'ընէ՝ Կ. Պօլսոյ պարսպանները փութով նորոգելու համար: Յովհաննէս պատրիարք իւր հօտին զուլսը կ'անցնի եւ պարզ դուր ծառերի մը պէս շաղախ կը կրէ. Սուլթանը կը սքանչանայ անոր ուղղամտութեանը վրայ եւ սամոյր մուշտակ մը նուիրելով կը խնդրէ որ ալ եւս չ'աշխատի: Հայերը պատնէշներէն մաս մը կը նորոգեն տեղոտ գործունէութիւն մը ցոյց տալով: Ահաւասիկ այս ատիծան էր իրենց հայրենասիրութիւնը Ապտիւլ Համիտ Բ.ի աղետալի իշխանութենէն առաջ, որ ցրտացնելու ջանաց այս անձնուէր ժողովրդին համակրանքը:

1811ին Յայնրը խնդրեցին Բ. Դոնէն, որ հայոց երուսաղէսի Ս. Յակոբ վանքը իրենց վերադարձուի, հայերու կողմէ յափշտակուած յունական հին սեփականութիւն մը ներկայացնելով զայն: Յովհաննէս պատրիարք ազգային եւ հոմալեական եկեղեցիներու երեւելիները գումարեց խորհրդակցելու, վանքին պաշտպանութեանը համար ձեռք առնուելիք միջոցներուն վրայ: Տիւզը, Թնկաները, Կէլէիները եւ ուրիշ հայ կաթողիկոսներ՝ ազգային եկեղեցւոյն երեւելիներուն հետ կը մրցէին եռանդեամբ, ոչ-կաթողիկ վանքի մը իրաւանց պաշտպանութեանը համար: Համբարախութեան այս ոգին մեր հարց պատիւ կը բերէ եւ արժանի է մեր ապագայ սերունդին ալ իբր առաջնորդ ծառայելու:

Այս գործակցութեան յաջողութենէն քաջալերել, երկու դաւանանքին լուսավիտ մարդիկը, փորձեցին երկու եկեղեցիներուն միութիւնը փոխադարձ զիջումներով իրագործել:

Իրենց ազնիւ ճիգերը որ յաղթանակելու կէտին հասած էր, երկու կողմանց մոլեռանդները:

Նորհիւ յամառ ընդդիմութեան մը հանդիպեցաւ այս անձնուէր ոգին անախորժ չէր թուրք իշխանութեան. այնքան մոլեռանդ՝ որ իւրաքանչիւր եհնիչերի պարտականութիւն մը կը նկատէր հայոց պատրիարքարանին ցոյց տալու այն հայերը, որք պահք օրերը ձուկ կը դնէին կամ կուտէին եւ ի ներքուստ գէշ աչքով չէին նայեր հայ ժողովուրդը բաժնող եւ զանոնք խորտակելու համար պատրուակ մատակարարող այս ամէն իրաց վրայ:

Հարիւրաւոր եհնիչերին Գուգարու պատրիարքարանը պաշարեցին, եւ այս բարբարոսները գնդակներով կը խոցէին կամ բանտ կը նետէին Պօլսո պատրիարքի դէմ բողոքող բոլոր հայերը. այս պատրիարքը հայ հոմալեականաց միութեան խումբին պետն էր:

Գլխատեցին կամ կախեցին Գրիգոր Սագալէնց Թակոբ Կիսարացի, Կարապետ Սարկուազ, երիտասարդն Ազարիա եւ Տէլի Պաղտասար. տարի մը վերջ, Տիւզեան գերգաստանին չորս անդամները Գրիգոր, Սարգիս, Միքայէլ եւ Մկրտիչ գլխատուեցան կամ կախուեցան: Առեւտրական եկեղեցւոյն յարեւուն պատճառաւ և ճեմակալան եկեղեցւոյն ձմրան մէջ հոմալեական հայերը խմբովին աքսորեցին. բայց ասիկա վերջ գտաւ, ազգային մարմնէն բաժնուած հայ կաթողիկ համայնքի մը կազմակերպութիւնով:

1819ին, Չէլթուրի հայերը իրենց 60,000 զրշի տարեկան հարկը դադարեցուցին Բ. Դրան վճարել եւ անվնէր կերպով ապստամբութեան դրօշ բարձրացուցին: Կիլիկիոյ Կիրակոս Կաթողիկոսը ապստամբներու իբր մեղսակից, Մարաշի մէջ ձերբակալուեցաւ եւ Կ. Պօլսու զրիւնեցաւ՝ ուր յաշտուեցաւ ինքզինքը արքայացնել: Թուրք կառավարութիւնը հաւանեցաւ 20,000 զրշի վերածել Չէլթուրի տուրքը. բայց կաթողիկոսը չ'համարձակեցաւ յանուն այս աննուած լեռնականներուն խնայում մը տալ: Կիրակոս կաթողիկոս Սիս վերադարձաւ, ուր երկու տարի վերջ մնաւ թուրք երեւելիի մը կողմանէ թունաւորուելով:

1821ին յունական ապստամբութիւնը, թուրքերուն իբր պատրուակ ծառայեց քրիստոնեաները ջարդելու. եհնիչերինը Կ. Պօլսոյ մէջ եւ շրջակայքը, գէշ կը վարուէին հայոց ինչպէս նաեւ յունաց հետ, եւ Հայրապետ Պապայեան երեւելի հայ յօշոտեցին եւ բազմաթիւ հայեր ալ թրէ անցուցին: Ապրիլ 29ին (հ. ա.) Վալիտէ-Սանին գուռը կախեցին Գառպար ամիրա Չարաղեան՝ (Չէրազ) մեծահարուստ սեղանաւոր Եանսայի Ալի փաշայի, որ Ալպանիայի տիրած էր եւ յոյն ապստամբներուն հետ միացուցած: Ահաւասիկ հիլինական դատին համար մարտիրոսացած հայեր:

L'Arménie  
(Շարունակելի) Թարգմ. ՊէԱՒԻՐԻՍ

ՄԱՆՄՈՒՏ ՓԱՅՍ

«Մաթէն»ի 12 Յունվար թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք:

ԼՈՆՏՈՆ 11 Յունվ. — Շատ մը լրագիրներ «Կաղէթ» սը Պրանքֆօրթէն առնելով հրատարակած են թէ՛ Մահմուտ փաշա Փարիզի Օսմանեան դեսպանին միջոցաւ կարգ մը պայմաններ առաջարկած է, իր Պօլսու վերադարձին համար: «Մաթէն» այս պայմանները արդէն ծանօթացուցած է:

Մահմուտի որդին, Բրէնս Լութֆուլլահ շատ լաւ ընդունելութիւն մը ըրած է «Մաթէն»ի Լոնտոնի ներկայացուցչին:

Երբ մենք գացինք, կը գրէ, զինքը հարցաւորած է «Կաղէթ» սը Պրանքֆօրթի զրոյցի մասին:

— Բաւական արտակարգ կը գտնեմ ըսաւ մեզ Բրէնսը, գէտքերու վեր ի վայր շրջման այս կերպը:

Պէտք չէ մոռնալ թէ՛ երբ հազիւ Մարտէյի նաւահանգիստը հասած էինք, Սէյ-Ֆէտտին պէյ, Մարտէյի Օսմանեան հիւպատոսը, մեզ հաղորդեց չորս երեսներէ բաղկացեալ հեռագիր մը, որուն մէջ Սուլթանը կը խոստանայ մեզ մեր բոլոր ուղածը, պայմանաւ որ անմիջապէս Պօլսու վերադառնանք:

Մեր Փարիզ ժամանման յաջորդ օրը Օսմ. դեսպան Միւնիւր պէյ, կարծելով թէ պիտի կարենայ իւր Մարտէյի ստորագրուած եւելի լաւ յաջողիլ մեզ մօտ. Սէյ-Ֆէտտին պէյի ըսածներէն աւելի փայլուն առաջարկութիւններ ըրաւ: Այս երկու անձինք, ինչպէս դուք իսկ արդէն կրնաք ենթադրել մեր ի Լոնտոն ներկայութեամբը, մեզ մօտ բնաւ չ'յաջողեցան. որովհետեւ մենք չէնք ուզեր և ոչ մի անձնական առաւելութիւն ձեռք բերել այն պայքարով, զոր ձեռնարկած ենք:

Մենք բացարձակապէս կը պահանջենք միմիայն մեր երկրին համար օգտակար բարենորոգումներ:

Յանհունս շնորհապարտ կացուցած պիտի լինիք զմեզ, եթէ յայտարարէք թէ մեր վրայ հրատարակուած բոլոր լուրերը և որք մենք բղխած չեն, կրնան նկատուիլ իբր բացարձակապէս քմահաճ:

Արդէն բոլոր այս ծանօթութիւնները Պօլսէն հաղորդուած են և աւելորդ է ըսել թէ ուղղակի կամ անուղղակի Պալատէն ներշնչուած են:

Պէտք չէ զարմանալ ուրեմն ատոնց ունեցած ձգտումներուն:

ՖՐԱՆՍԱՅԻ ՈՍԿԻՆ. — Այս միջոցիս որ ոսկին այնչափ մեծ դեր կը կատարէ ամէն բանի մէջ, հետաքրքրութենէ զուրկ չէ հաստատել թէ Անգղիա Թրանսլալեան պատերազմն սկսած ժամանակ իւր դրամարկղին մէջ հազիւ 600 կամ 800 միլիոն ֆրանքի ոսկի ունէր:

Նայն միջոցին Փրանսական Պանքան իւր արկղին մէջ ունէր 1879,086,847 ֆրանքի ոսկի: Ոսկեհանքերն տասը տարիներէ ի վեր, փոխանակ պակսելու շատ աճած են: Ամբողջ աշխարհիս մէջ 1891էն մինչև 1899ը ոսկին 10,250 միլիոնի հասած է, մինչ 1880էն 1889ը 5,600 միլիոնի հասած էր: Եւ սակայն եւրոպայի մէջ երեք տարիներէ ի վեր դրամն նրւազած է կ'ըսեն:

Հետաքրքիր մանրամասնութիւն մ'ալ: Մինչ Փրանսայի դրամարկղին մեջ գտնուած ոսկին երկու մէլիարձէն 100 միլիոն պակաս սարսափելի թուին կը հասնի, օտար երկիրներունը հազիւ 744 միլիոնի կը հասնի:

ՔԻՉ ՄԸ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Համաձայն «Արշալոյս»ի նախորդ թուով գրածներուն, վստահութեամբ կրնանք ըսել թէ՛ կատարելապէս գ.ճ մնաց հայ հասա-



Արդ ներկայիս կուգանք ժողովոյդ ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալ կէտերու վրայ:

1. Ինչո՞ւ համար Մայր Դիւանը չը գործադրուց Գործադիր ժողովին խնդիրը, որ կը պահանջէր միշտ իր անդամոց պակասին լրացումը:

2. Առանց Գործադիր ժողովէն հաշիւ պահանջելու, առանց անոր գիտակցութեան և նոյն իսկ առանց պզտիկ մէկ ազդարարութեան, փողոցի մէկ անկիւնը, սրճարանի մը մէջ, գիշերօք մէկ քանիներու հաւաքումին Ընդհ. ժողով կրնա՞նք ըսել և անոր անօրինութիւնները օրինաւոր կըրնա՞ն սեպուիլ:

3. Ի՞նչ օրէնքով և ի՞նչ իրաւունքով կրնան ընկերութենէն, իրենց տգեղ բասովը, արտաքսել տասնէ աւելի պատուաւոր անձնաւորութիւններ, որովհետեւ իրենց դէմ օրինական գիտողութիւններ ըրած են. և Երբ ուղեցինք մենք զանոնք սիրաշահիլ և անոնցմէ նուէր ու բաժնեկիցի անոնել յօգուտ ընկերութեան, ի սպառ արգիւցնին առարկելով թէ այդ անձինք արտաքուստ ինչ եղեր որոշումով Ընդհ. ժողովին, որուն օրինաւորութեանը վրայ ալ պիտի տարակուսինք:

4. Ինչո՞ւ ընկերութեան զբաւը կը մնայ նախորդ Գանձապահին քով, որ հիմայ ուսէ գործուն գեր չունի ընկերութեան մէջ:

Հետեւաբար մենք ստորագրեալքս, թէ և 2 անդամ մնացած, պարտաւոր ենք մեր հաշիւները ներկայացնել, մեզ յանձնուած օրէն և պարտաւոր ենք նաեւ բռնել մեզ տեղը մինչև և մեր յաջորդներուն օրինաւոր ընտրութիւնը:

Ուրիմն կը խնդրենք որ հաճիք վերագրել հարցերը նկատողութեան առնել:

Մենք կրնանք, որովհետեւ շատ դիւրին է, յանձնել ընկերութեան գոյքերը, իրերը անոնց, բայց միւս կողմանէ չենք ուզեր որ գէշ աւանդապահ մը սեպուիք, մեզ ընտրող Ընդհ. ժողովին առաջ:

Միանգամ ընդ միշտ վերջ տալու համար, թէ՛ եղած և թէ՛ ըլլալիք գեղձումներուն և ժողովուրդին մէջ տարածուած գայթակղութեան, որ ծնունդ առած է, նախորդ Գործադիր ժողովոյ համարատուութեան անկարողութենէն և զոր փարատելու ի գուր ջանք չը խնայեցինք, և նաեւ վերջապէս բոլորովին մաքրելու համար ընկերութեան գործառնութիւններուն այժմու գէշ գրութիւնը, կարեւոր կը տեսնենք, օրինական ամեն միջոց ի գործ դնելով, ընկերութիւնը իր նպատակին յարմար ու վայել ընթացքի մէջ դնել: Եւ կամ գէթ կարելի ըլլար, իմացունել մեզ թէ, մենք պարտաւոր ենք այդ գիշերային սրճարանական խորհուրդին անօրինութիւններուն հպատակիլ, թէ ոչ:

Յուսալով թէ պիտի յաջողինք օգտուիլ ժողովոյդ չըջանայեաց անօրինութենէն:

Խոնարհաբար  
Ն. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ Յ. ՔԻԻՐՔՃԵԱՆ


Երբ, ներկայացանք Քաղաքական ժողովին, երկար բանակցութիւններէ յետոյ պատուիրեցին որ մենք առ այժմ շարունակենք մեր պաշտօնը և իրենք խնդիրը, և նախորդ հաշիւները քննելով, արձանագրութիւնները նայելով, պիտի որոշեն պէտք եղածը:

Արդ, ընկերութեան այժմու կացութիւնը բաւական պարզելէ հոգը, կուգանք ջերմազին խնդրել, ընկերութեան յարգոյ անդամներէն և մանաւանդ ժողովուրդէն, որ անտարբեր չը մնան Աղքատախնամի շանդէպ և Քաղաքական ժողովին որոշումէն ետք անշուշտ պէտք պիտի ըլլայ Ընդհ. ժողով գումարել, զան միանան և աւելի օգտակար ձեռքերու յանձնեն ընկերութիւնը. ընկերութիւն մը՝ որ շատ պէտք է մեզի, փորձով գիտենք, հայրենիքէն, օտար երկիրներէն թափառելով երբ հոս ինչան մեր եղբայրները, անոր է որ կը դիմեն ամենէն առաջ, երկրին անձամբ, լեզուին անգլիտակ իրենց թշուառութեանը մէջ վախկոտ սարսուռով:

Թողունք հոս գանձող աղքատները և հիւանդները որք շատ են և օգնութեան կարօտ: Ներկայ Գործադիր ժողովոյ մնացած երկու անդամները  
Ն. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ Յ. ՔԻԻՐՔՃԵԱՆ

### Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ա. Տ. ՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՊԻԼԵԱՆ ԸՆԿ.  
ՇԱՐԻ. Ա. ՊՏԻՒԼ. Ա. ՉԻ. Չ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի ճաշակին ևս նըբայած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քանանայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բաղմնազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻ. ՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտագրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմնառուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնաիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գնելու ՉԱՓԱՉԱՆՅ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամասչելի են:

Թէ և Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վատահոթիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ազգամտօճիւն Թէյերու սեսակի, կօլուի և զնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻՒԿ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

### ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 21 ՅՈՒՆԻԱՐ 1900

Ա. Թիւ	931	չահած է	Յրանք	4000
Բ. "	8704	"	"	200
Գ. "	1424	"	"	100
Դ. "	2160	"	"	50
Ե. "	1792	"	"	50

Հիտեւալք	23	ական ֆրանք	կը շահին
4705	340	3639	7353 8626 6187
4828	6761	4565	1535 7684 9796
7097	8849	1677	3757 5840 435
	1033	5144	4977 7794

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, ընկերութեան անուակին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

### ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ա. Տ. ՈՒՆ ԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ  
ՊՕՆՕԿԻՐԱԾ

Գ. Ա. ՉԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՉԻՐԷ  
Ս. Ե. Ս. ՍԷՏԱՎԻԻ վաճառասան դիւանց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուէ պատի և քօնօտի ընտիր սեւակէ բանախելներու մեծ մթերքը:

ԴԻՄԵՅԷ՛Ր ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, ազամանդազարդ, ոսկի, տարածք և ճիւղի:

Յրանաական և ամերիկեան արանաց ամենաընտիր տեսակներէն զարդիչներ, օրթներ, փասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱԿՈՐ

### ԿԱՐՆԻՈՐ ԱՉԻ

Ամենափափուկ ստամբքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար լքուող յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

### ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌԸ

Օռօգի Պալ վաճառասան մօտերը, կամե-էլ-Պեմարի ճիւղ գիւմարը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. քաղմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարգախ ալուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգլիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղ ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 23—30

Le Gérant Dr A. S. HAGOPIAN